ՀԱՍՄԻԿ ԿԻՐԱԿՈՍՅԱՆ

Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարան
Երևանի պետական համալսարան

ԳԱՆՁԱԿՅԱՆ ՀԱՅԱՏԱՌ ՊԱՐՍԿԵՐԵՆ ՁԵՌԱԳԻՐ ԱՎԵՏԱՐԱՆԸ ՎԻՃԱԲԱՆԱԿԱՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

Բանալի բառեր՝ *Մահմեդականացում, քարոզչություն, հակաքրիստոնեական տրակտատներ, սուրբ գրություններ, կրոնական ինքնություն:*

Երևանի Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի ինստիտուտում պահվում են հայատառ պարսկերեն առանձին ձեռագիր մատյաններ, իսկ հայերեն ձեռագրերում զետեղված են կրոնական և գրական բնույթի պատառիկներ և քաղվածքներ, որոնք հայ-իրանական մշակութային փոխազդեցությունների և պատմաքաղաքական շփումների վկան են: Հայատառ պարսկերեն հնագույն ձեռագրերը մեզ են հասել XIV դարից: Այդ գրականության ստեղծումը պայմանավորված էր մի քանի հանգամանքերով: XIII դարից սկսյալ (աղբյուրների վկայությամբ) իրանահպատակ քրիստոնյա համայնքն ավելի լավ տիրապետում էր պարսկերենին, քան՝ մայրենի լեզվին: Ընդ որում, քրիստոնյա համայնքը (հայեր, ասորիներ) չուներ էթնիկ տարբերակում՝ և պարսկերենը միջէթնիկ շփման միջոց լինելով՝ դարձավ նաև սուրբ գրությունների թարգմանության լեզու: Հայ գրերի օգտագործումը պարսկերեն սուրբգրային թարգմանություններում ձևավորում էր իրանահպատակ հայ քրիստոնյաների ինքնությունը, ինչին ձգտում էր նաև հայոց եկեղեցին: Հայատառությունը նպաստում էր հայ ինքնության ձևավորմանը և պահպանմանը, քանզի ուներ նաև խորհրդանշական բնույթ: Միջնադարյան իրականությունից սկսյալ, կրոնական գաղափարախոսության տիրապետության պայմաններում, հայ գիրն ու գրականությունը և, հատկապես, այբուբենն ու տառերը սրբագործվել և սրբազան բովանդակություն էին ստացել: Իրանահապատակ հայության համար իսլամական քարոզի և Սեֆյան շահերի կողմից իրականացվող մահմեդականացման գործընթացի պայմաններում հայատառ պարսկերեն Սուրբ գրությունները կրոնական և էթնիկ ինքնության սահմանները պահպանելու և ամրապնդելու, քրիստոնեական գիտելիքը տարածելու միջոց էին:

Սույն ուսումնասիրության թեման 1780 թ. Գանձակում ընդօրինակված ՄՄ 3044 հայատառ պարսկերեն Ավետարանն է[1]*, որի նախագաղափար օրինակը նույնպես պահվում է Մատենադարանում՝ ՄՄ 8492, գրված 1717 – 1721 թթ., Շամախի - Թիֆլիսում*[2]*: Արևելյան Այսրկովկասում*[3] *ապրող իրանահպատակ հայ բնակչության համար պարսկերեն թարգմանված այս ձեռագրերը դիտարկում ենք Սեֆյան Իրանում իսլամական քարոզի և մահմեդականացման պայմաններում իրականացվող քրիստոնեամուսուլմանական վիճաբանությունների ընթացքում դրանց կիրառության համատեքստում: Նման քննարկման համար հիմք է ծառայում ՄՄ 3044, թ. 141ա -ի (նույնությամբ արձանագրված է նաև նախագաղափար օրինակում, ՄՄ 8492, թ. 236բ) հիշատակարանում գրիչի հետևյալ բացատրությունը.*

«դանըստայ պաշիտ է բըրայդէրան ազիզ. քի սապապ ինճիլ մազիմ նվիշտան. բըզբբան ֆարսի ինպուտ fի աfսար մալիման մըսըլմանան դըղաթ միգըրեֆտանտ բայ ջամիյիեաթ իսայիեան դար բալայի աfսար չիզայ. fի ունչընան իեայ ին չընան աստ. *դար բալայի ին մուղայդամայ լազում շօտ բար ին բանդայ գունայքար հաղիր վէ մօխլէսի թամման խաչփաստան ռաստի քանոնան Միքայիլ. վալատի Մարգարայ. շարի Նախշի ջհան. շարադէի եզդըվար. քի սաքին դարամ շարի Գանճայ. սանայի Եսոյ Մասե. հըզար հաֆտ սատ. հաշտատ. դիկարի սանայի հըզար դըվիստ բիստ հաշտ: մայե մուհէրլիմ»:*

Թրգմ. *«Իմացեք, ով սիրելի եղբայրնե՛ր, որ սուրբ Ավետարանը պարսկերենով գրելու պատճառն այն էր,* nr մուսուլման ուսյալներից շատերը շատ հարցերի շուրջ վիճաբանում էին fրիստոնյա համայնքի հետ, թե՝ այսպես չէ և այնպես է: *Այս նախաբանին [ավելացնելու] անհրաժեշտությունը հասավ [ինձ]՝ մեղսագործ, ազնիվ, իսկական խաչապաշտներին նվիրյալ Միքայել քահանային,*

---

[1] Ամփոփ նկարագրությունը տե՛ս *Յուցակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի*, հ. Ա, Երևան, 1965, սյ. 927, *Մայր ցուցակ հայերեն ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի*, հ. Ժ, Երևան, 2019, սյ. 213-218:

[2] *Յուցակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի*, հ. Բ, 1970, սյ. 756:

[3] Արևելյան Այսրկովկասում պարսկերենի տարածվածության և գործածության պատմությունը նշանավորվում է X դարի սկզբից, երբ այստեղ իշխանության են գալիս էթնիկապես արաբ, սակայն՝ իրանական մշակույթի և լեզվի կրող Շիրվանշահերը (մինչև XVI դարը): 1538 թ. Սեֆյան շահ Թահմասպը ներխուժեց Շիրվան, գրավեց այն և դարձրեց սեֆյանահպատակ մարզերից մեկը: 1590 թ. Օսմանյան Սուլթան Մուրադ III և Շահ Աբբաս I-ի միջև կնքված համաձայնագրով Շիրվանը հանձնվեց օսմանցիներին, սակայն 1607 թ. Սեֆյան գերիշխանությունն այդ տարածքում վերականգնվեց և շարունակվեց մինչև XIX դարի սկիզբը՝ տարածաշրջանում ռուսների հայտնվելը: Շիրվանշահերի վարչական լեզուն պարսկերենն էր և Արևելյան Այսրկովկասում ապրող տեղի բնակչությունը, նաև՝ հայերը, միջէթնիկ և արտաքին հետ շփման համար օգտագործում էին այդ լեզուն: Արևելյան Այսրկովկասում պարսկախոսության տարածվածությունը պայմանավորված էր, առաջին հերթին, պարսկերենի իշխանական լեզու լինելու հետ:

Մարգարի որդի, Նախշե Ջհան քաղաքից[4], *Եզդըվար գյուղաքաղաքից, որ այժմ ապրում եմ Գանջայում: Քրիստոնեական թվականության 1780 թ., մյուսը թվականը՝ 1228: Մուհարրամ ամիս»*[5]*:*

Միքայել քահանայի այս բացատրությունից գալիս ենք հետևության, որ Ավետարանների պարսկերեն թարգմանություններն ուղղված էին օգնելու քրիստոնյա համայնքին մուսուլման ուսյալների հետ վիճաբանությունների ընթացքում պատասխանելու վերջիններիս հարցերին և, փաստորեն, Գանձակյան Ավետարանը վիճաբանական թարգմանական գրականության մաս է կազմում: Սեֆյան Իրանում հայադավան իրանահապատակ բնակչության մահմեդականացման գործիքներից էր քարոզչական գործունեությունը, որի շրջանակում գործում էր նաև քրիստոնեամուսուլմանական միջկրոնական վիճաբանությունների մեխանիզմը: Ընդ որում, այդ վիճաբանությունների համատեքստում դիտարկում ենք թե՛ հակաքրիստոնեական ու քարոզչական գրականությունը, սուրբգրային թարգմանությունները, նաև՝ ըստ դալա՛իլ ալ-նուբուվա[6] *ժանրի, և թե՛ բանավոր վեճերի անցկացումը, որն իրականացվում էր հռոմեադավան, հայ առաքելական եկեղեցիների և մահմեդական հոգևորականության միջև:*

Քրիստոնեամուսուլմանական վիճաբանական թարգմանական գրականությունը հատկապես նշանավորվում է XVI դարավերջին և XVII դարասկիզբին՝ Հնդկաստանի մողոլ Աքբար կայսրի գործունեությամբ: Նա իր նոր «Աստվածային կրոն» ստեղծելու գաղափարի շրջանակում Հնդկաստան ժամանած կաթոլիկ հայրերին պատվիրեց Ավետարանները թարգմանել և դրանք ուսուցանել արքունիքում: Իսկ կաթոլիկ հայրերը ոչ միայն թարգմանում էին Ավետարանները պարսկերեն և դրանք օգտագործում քարոզչության համար, այլև գրում կամ թարգմանում էին ոչ-քրիստոնեական հավատալիքները մերժող երկեր[7]*: Սրան*

---

[4] Գրիչը նկատի ունի Սպահանի «*Նաղշ-ե Ջըհան*» (թրգմ. «աշխարհի զարդը») անունը, որը Սեֆյանների ժամանակշրջանից այդ քաղաքի գլխավոր հրապարակի անունն է և, երբեմն, նույնացվում է Սպահանի անվան հետ:

[5] Ձեռագրերի ամբողջական հիշատակարանները և դրանց քննությունները տե՛ս **Հ. Կիրակոսյան**, «Մաշտոցյան Մատենադարանի հայատառ պարսկերեն երկու ձեռագիր Ավետարանների հիշատակարանների մասին (ՄՄ 3044, ՄՄ 8492)», *Էջմիածին*, 2018, Ե, էջ 56–70, իսկ բնագրերի գրության կանոնների մասին տե՛ս "The Orthographic Rules of the Eighteenth Century Armeno-Persian Gospels of the Matenadaran (Ms. 8492, Ms. 3044)," *Iranian Studies* 2019, DOI:10.1080/00210862.2019.1649960, «Մատենադարանի հայատառ պարսկերեն ձեռագիր Ավետարանների (ՄՄ 8492, ՄՄ 3044) տառադարձման կանոնները», *ԲՄ* № 26, 2018, էջ 100-121:

[6] *Դալա՛իլ ալ-նուբուվա (Dalā'il al-nubuwwah* – Մարգարեության ապացույցներ)՝ Աստվածաշնչի միջոցով իսլամի ճշմարտացիությունը ապացուցելու ժանր, որի արմատները հասնում են VIII-IX դարեր, տե՛ս **A. Tiburico**, "Muslim-Christian Polemics and Scriptural Translation in Safavid Iran: 'Ali-Qoli Jadid al-Eslām and his Interlocutors", *Iranian Studies* 50/2, Routledge, 2017, p. 256:

[7] Նույն տեղում, էջ 251-253:

զուգընթաց զարգանում էր բանավոր վիճաբանությունների ավանդույթը: Սեֆյան Իրանում ևս, ասես՝ որպես շարունակություն Հնդկաստանում տեղի ունեցող գործընթացների, քարոզչական և վիճաբանական ավանդույթի զարգացումը պայմանավորված էր կաթոլիկ քարոզիչների գործունեությամբ: Վերջիններիս գործունեության մեթոդները որոշակիորեն ազդում էին պարսից շահերի վրա՝ որպես դավանափոխության գործիք օգտագործելու քարոզը: Սեֆյան Իրանում միջկրոնական գրավոր և բանավոր վիճաբանությունների ընթացքն ու սաստկացումը կապված էր կաթոլիկ քարոզչության հետ և դրա սոցիալական արդյունքներից էր:

Իսլամի և կաթոլիկության քարոզչության պայմաններում ստեղծվող պարսկերեն գրականությունը ուներ բանավիճային բնույթ. մի կողմից ստեղծվում էր գրականություն, որն ապացուցում էր քրիստոնեության ճշմարտացիությունն ու իսլամի արատավորությունը և քարոզում հետևել ոչ թե իսլամին, այլ՝ քրիստոնեությանը, մյուս կողմից ստեղծվում էր քրիստոնեության թույլ կողմերը բացահայտող և իսլամը գովաբանող գրականություն՝ մահմեդականացման գործընթացի հաջողությունը ապահովելու համար: Այս գրվածքները հեղինակում էին համապատասխանաբար քրիստոնյա[8] *կամ քրիստոնեություն ընդունած՝ մուսուլման*[9]*, և մուսուլման կամ մուսուլման դարձած քրիստոնյա հեղինակները: Վերջիններս՝ հիմնականում եվրոպացի միսիոներներ կամ առևտրականներ էին,*

---

8 Այստեղ հատկապես պետք է նշել 1595 թ.-ից Լահորում գործունեություն ծավալած պորտուգալացի Յ. Խավիերի պարսկերենով ստեղծած քրիստոնեական գործերը՝ «Քրիստոսի պատմությունը (*Dāstān-e Masīḥ*)», «Ճշմարտությունն արտացոլող հայելին (*Āyīne-ye ḥaqqnamā*)» և այլն: Ընդ որում, վերջին աշխատության մեջ (գրված՝ 1609 թ.) կաթոլիկ քարոզիչը բանավեճ է ներկայացնում մի փիլիսոփայի և շիա մոլլայի միջև, քննարկում է ոչ միայն քրիստոնեական դավանաբանական հարցեր, այլև՝ համեմատում Ավետարանը և Ղուրանը: Այս աշխատությանն ի պատասխան, շիա փիլիսոփա և մտածող Ահմադ Իբն Զաին-Ալաբիդինը 1621 թ. գրում է հակաքրիստոնեական մի երկ՝ «Քրիստոնեական սխալը մերժելու աստվածային ճառագայթները (Al-lawāmʿ al-rabānīye fī radd al-shaba al-naṣrāniye)»՝ հերքում Խավիերի բերած բազմաթիվ մտքերը, քրիստոնեական գաղափարները՝ դրանց հակադրելով իսլամականը, տե՛ս **Lee S.**, Preface: *Controversial Tracts on Christinity and Mohammedanism*, Cambridge, 1824, pp. xli–cviii: Շիա մտածողի մյուս նմանատիպ աշխատությունն է՝ «Մի փոքր մաքրություն (*Methqāl-e ṣafā)*»-ը, տե՛ս **A. Tiburico**, “Muslim-Christian Polemics…,” p. 254:

9 Քրիստոնություն ընդունած մուսուլմանների մասին տեղեկությունները քիչ են, բայց պետք է նշել, որ նրանք, հիմնականում, քրիստոնյա էին դառնում Իրանից դուրս՝ հատկապես Եվրոպայում, ուր գնում էին պաշտոնական կամ առևտրական առաքելությամբ, կամ՝ ուսանելու:

որոնք կամովին իսլամ էին ընդունում, նաև գործունեություն ծավալում հակաքրիստոնեական քարոզչական քաղաքականության շրջանակներում[10]։ Իշխանական և հոգևոր վերնախավը մահմեդականացած կաթոլիկ հոգևորականներին ստեղծագործական ազատություն էր տալիս և խրախուսում նրանց կողմից հակաքրիստոնեական գրականության ստեղծումը[11]։ Սեֆյան Իրանում քրիստոնեությունը մերժող աշխատությունների հեղինակ է պորտուգալացի իսլամացած միսիոներ Պ. Անտոնիո դե Ժեզուսը (P. Antonio de Jesus) (մահմեդական անունը՝ ʻԱլի Ղոլի Բեկ)։ Վերջինիս գրչին են պատկանում «Մարգարեության հաստատումը (Athbāt-e nabwat)», «Ամուսնության օգուտները (Fav'ed-e ezdewāj)», «Սուֆիների գաղափարների մերժումը (Radd-e ʻaqāyed-e ṣūfīyān)», «Կռապաշտների դեմ պայքարելու հավատքի սուրը (Seyf ul-mūmenīn fī qatāl al-mashrakīn)» և այլ աշխատություններ, որոնք հեղինակն ուղղել է թե՛ շիա հոգևորականությանը, և թե՛ քրիստոնյա հոգևորականներին, վերջիններիս, մասնավորապես, ուղղորդելով ետ կանգնել սխալ ճանապարհից՝ քրիստոնեությունից։ Նրա նպատակներից էր նաև շիա հոգևորականությանը դրդել հեղինակելու քրիստոնեությունը մերժող և քննադատող աշխատություններ, իմանալ այն կետերը, որոնցով հնարավոր է մերժել քրիստոնեությունը և դա օգտագործել քրիստոնյաների շրջանում իսլամը քարոզելիս[12]։ Նրա «Կռապաշտների դեմ պայքարելու հավատքի սուրը» աշխատությունը Թորայի պարսկերեն թարգմանությունն է՝ հավելված կրոնական վեճերով, որը, դիտարկվում է դալա՛իլ ալ-նուբուվա ժանրի մեջ, և որտեղ հեղինակը առաջարկում է օգտագործել Թորան քրիստոնյաներին քարոզելու ժամանակ իսլամի ճշմարտացիությունը ապացուցելու համար[13]։

Նույն ժանրում է թարգմանված նաև Սեֆյան շահ Սուլթան Հուսեյնի պատվիրած պարսկերեն Ավետարանը։ Շահ Սուլթան Հուսեյնը կրոնափոխության

---

[10] Եվրոպացի քրիստոնյաների մահմեդականացում հաճախ տեղի էր ունենում մուսուլման կնոջ հետ ամուսնանալու, ֆինանսական գայթակղությունների պատճառներով, տե՛ս **R. Matthee**, "Confessions of an Armenian Convert. The Iʻtirafnama of Akbar (ʻAli Akbar) Armani" in *The Empires of the Near East and India: Source Studies of the Safavid, Ottoman, and Mughal Literate Communities*, ed. Hani Khafipour, Columbia University Press, 2019, p. 12:

[11] Իսլամական աշխարհում հակաքրիստոնեական գրականության ցանկը կարելի է տեսնել Մոհամմադ Ջավադ Բալաղիի հակաքրիստոնեական "Al-tawhīd wal-tathlith" (Ղոմ) աշխատության վերջում, ըստ՝ **R. Jʻafaryān**, "Adabiyāt-e ẓedd-e masīḥī dar doure-ye Safavī" // *Tarjome-ye anājīl-e arbeʻe*, Tehran, 2005, p. 75: Տե՛ս նաև **R. Matthee**, "Confessions of an Armenian…" p. 13:

[12] Այս գործիչի մասին տե՛ս **F. Richard**, "Un Augustin Portugais renegat apologist de l'Islam chiite au début du XVII siècle," *Moyen Orient & Océan Indien (Middle East & Indian Osean) XVIe-XIXe* ss. 1984, pp. 73-85, նաև՝ R. Jʻafaryān, "Adabiyāt-e ẓedd-e masīḥī dar doure-ye Safavī" // *Tarjome-ye anājīl-e arbeʻe*, pp. 46-66:

[13] **A. Tiburico**, "Muslim-Christian Polemics…" pp. 255-269:

քաղաքականությունը իրականացնում էր քարոզչական և վիճաբանական ավանդույթի շրջանակում: Նա խրախուսում էր մուսուլմանների և քրիստոնյաների մասնակցությամբ վիճաբանական հանդիպումների կազմակերպումը: Շահը պատվիրեց նաև պարսկերեն թարգմանել Ավետարանը՝ նպատակ հետապնդելով բարձրացնել մուսուլման հոգևորականության քրիստոնեական գիտելիքի իմացության մակարդակը[14]*՝ այդ վիճաբանությունների ընթացքում հաղթելու համար: Մոհամմադ Բաղեր Խաթունաբադին թարգմանել է Ավետարանը պարսկերեն, ըստ գրիչի տեղեկության՝ արաբերեն տարբերակից, քանզի ժամանակին Ավետարանի բազմաթիվ արաբերեն ձեռագրեր են եղել, իսկ անհասկանալի տեղիների համար դիմել է կաթոլիկ հայրերին: Այստեղ կարևոր է նշել, որ շիա հոգևորականության համար քրիստոնեության մասին գիտելիք ստանալու համար առավել վստահելի աղբյուր կարող էր լինել շիա բարձրաստիճան հոգևորականի և շահի պատվերով հասանելի լեզվով՝ պարսկերեն թարգմանված Ավետարանը: Խաթունաբադին իր թարգմանության առաջաբանում խոսել է աշխատանքը գրելու դրդապատճառների և շահի հովանավորության ու նպատակի մասին՝ «ի մի բերել և հասկանալ քրիստոնյաների խոսքերի վկայությունները թշվառ ժողովրդի սուտ և ունայն կրոնի մասին (թարգմ.՝ Հ. Կ.)»: Այդ պատճառով Ավետարանի թարգմանություններին կցել է ոչ միայն բացատրական, այլ նաև՝ քննադատական հավելվածներ: Շահ Սուլթան Հուսեյնի պատվերով թարգմանված Ավետարանը՝ դալա՛իլ ալ-նուբուվա ժանրում, միտված էին մուսուլման հոգևորականներին ճանաչելի դարձնել քրիստոնեությունը և քրիստոնեության «թերի» տեղիները՝ նրանց կրոնափոխության գործունեությունը ավելի արդյունավետ և թիրախային դարձնելու համար:*

Քարոզչական նշանակություն ուներ և կրոնափոխության պատմություն էր հայ կրոնափոխ մուսուլման 'Ալի Աքբարի սեփական հավատափոխության պատմությունը՝ "I'tirafnama"-ն: Պատմությունը գրվել է շահ Սուլթան Հուսեյնի իշխանության տարիներին, չնայած իր հավատափոխությունը, ըստ ամենայնի, տեղի է ունեցել շահ Սուլեյմանի օրոք: Ռ. Մաթին քննարկում է սույն պատմության ստեղծման պատմական և հասարակական նախապայմանները, սակայն ձեռնպահ է մնում մատնանշելուց՝ թե ո՞ւմ է ուղղված երկը, որը Աքբարը գրել է պարսկերեն՝ մանրամասն շարադրելով իր հավատափոխության պատմությունը[15]*: Աքբարը "I'tirafnama"-ում նախ պատմում է իր իսկական քրիստոնյա և հավատացյալ լինելու մասին և, որպեսզի արդարացնի ու պատճառա-*

---

[14] **K. J. Thomas**, *A Restless Search, A History of Persian Translations of the Bible* (with a contribution by Ali-Ascghar Aghbar), American Bible Society, 2015, pp. 139-144.

[15] **R. Matthee**, "Confessions of an Armenian …" pp. 11-31:

բանի իսլամ ընդունելու իր որոշումը, պատմում է երազների մասին, որոնք հուշել են, որ իսլամը ավելի ճիշտ կրոն է[16]*: Իսկ վերջնական որոշումը Աքբարը կայացնում է, երբ նրան շեյխ Մու՛մինը բացատրում է, թե հենց Ավետարանն է ասում, որ իսլամն է ճշմարիտ կրոնը և պետք է դառնալ մուսուլման: Աքբարը պահանջում է ցույց տալ այդ միտքը Ավետարանում, և շեյխը բերում է Ավետարանի մի օրինակ ու նրան «ապացուցում», որ Հիսուսն է կոչ անում դառնալ մուսուլման*[17]*: Բովանդակային այս ընթացքը թույլ է տալիս ասել, որ մուսուլման դարձած հայ քրիստոնյան գրում է այս պատմությունը պարսկերեն՝ իր հավատակիցներին քարոզելու և իսլամին անցնելու գործընթացը արդարացնելու միտումով*[18]*:*

Քարոզչական նպատակով ստեղծվող վիճաբանական գրականությունը՝ հարց ու պատասխանի տեսքով, նաև՝ սուրբ գրությունների թարգմանությունները պարսկերեն էին՝ որպես հիմնական շփման և ավելի հասկանալի լեզու: Միջկրոնական խոսակցությունները և բանավեճերը տեղի էին ունենում պարսկերենով, և պարսկերենով գրականության ստեղծումը նպաստում էր ավելի հեշտ այդ լեզվով վիճաբանելու և վկայաբերելու, հղման հնարավորություններ էր տալիս[19]*: Ընդ որում, պարսկերեն գրականությունը նաև կիրառական մեկ այլ*

---

16 Մանրամասն վերլուծությունը տե՛ս **A. Tiburcio**, “Some Aspects of Conversion Narratives in Late Safavid Iran and their Circulation: The Case of ‘Alī Akbar Armanī”, Eurasian Studies 15 / 2, 201, pp. 350–372:

17 Բովանդակային այս բացատրությունները ըստ Ռ. Մաթիի բերած տեքստի, տե՛ս **R Matthee**, “Confessions of an Armenian …” pp. **20-26**:

18 Քրիստոնեական և հուդայական սուրբ գրությունների մեկնությունները իսլամական քարոզի համար օգտագործելու գործընթաց տեղի է ունեցել նաև Օսմանյան կայսրությունում: Հայտնի է, օրինակ, մահամեդականացած հրեա հեղինակ Աբդ ալ-Սալամ ալ-Մուհտադի ալ-Մուհամմադիի «*Ռիսալա ալ-հադիյա*» պատմությունը, որտեղ նա հարց ու պատասխանի, նաև՝ առանձին պնդումների միջոցով մեկնաբանում է Թորայում տեղ գտած մտքեր՝ որպես իսլամին անցնելու ուղղորդիչներ: Այս տրակտատի մասին մանրամասն տե՛ս **Camilla Adang**, “Guided to Islam by the Torah: The Risāla al-hādiya by ‘Abd al-Salām al-Muhtadī al-Muḥammadī”, in *Contacts and Controversies between Muslims, Jews and Christians in the Ottoman Empire and Pre-Modern Iran*, ed. ***Camilla Adang, Sabine Schmidtke***, Ergon Verlag Würzburg in Kommission, 2016, pp. 58–72: Զուգահեռաբար, Օսմանյան կայսրությունում ստեղծվող վիճաբանական աշխատանքների ավանդույթի մասին, տե՛ս նաև՝ **J. Pfeiffer**, “Confessional Polarization in the 17th century Ottoman Empire and Yūsuf Ibn Ebī *Abdü’d-Deyyān’s Keşfü’l-esrār fī ilzāmi’l-Yehūd ve’l -aḥbār*”, նույն գրքում, pp. 15 – 55: Նաև՝ **T., Krstić**, *Contested Conversions to Islam: Narratives of Religious Change in the Early Modern Ottoman Empire,* Stanford, CA: Stanford University Press, 2011, և այլն:

19 Պետք է նշել, որ հայ մատենագրության մեջ քրիստոնեամուսուլմանական վիճաբանությունների գրական ավանդույթը ավելի հին պատմություն ունի, մասնավորապես նշենք VIII դարի Ղևոնդ պատմիչի «Հայոց Պատմութիւն-»ը, Գրիգոր Մագիստրոսի «Տաղասացութիւն» պոեմը (XI դար, ավանդաբար կոչվել է նաև «Առ Մանուչէ» և «Հազարատողեան»), Գրիգոր

նշանակություն ուներ. պարսկախոս մուսուլմաններին քրիստոնեությանը ծանոթացնելու հնարավորություն:

Ստեղծվող գրականության կողքին գործում էր նաև մուսուլմանների ու քրիստոնյաների միջկրոնական վիճաբանությունների բանավոր ավանդույթը: Այս վիճաբանությունները

- կազմակերպվում և հովանավորվում էին իշխանական վերնախավի կողմից և տեղի էին ունենում երկու կողմի հոգևորականների միջև

- տեղի էին ունենում մուսուլման հոգևորականների և հասարակ քրիստոնյա բնակչության միջև

- տեղի էին ունենում մուսուլման և քրիստոնյա հասարակ բնակչության միջև, որոնք խրախուսում էր իշխանական դասը:

Վիճաբանություններում արծարծվող հիմնական հարցերի շրջանակն էր. սուրբ գրությունների փաստարկվածությունը և իսկությունը, Հիսուս Քրիստոսի բնությունը, Քրիստոսի և Մուհամմեդի հարաբերությունը, Դատաստանի օրվա հետևանքները, քրիստոնեական և իսլամական ծիսակարգերի համեմատությունները: Բանավեճի նյութ էր նաև քրիստոնեական և մահմեդական կրոնների փոխհարաբերությունը, դրանց ծեսերի և սովորույթների, բարոյական սկզբունքների առավելությունը և թերությունը: Այդ շրջանում տեղի ունեցող վիճաբանություններում պետք է պաշտպանվեր քրիստոնեության ճշմարտացիությունը, այլապես՝ պիտի ընդունեին մահմեդականություն: Իհարկե, քրիստոնեամուսուլմանական միջկրոնական վեճերը չէին բերում որևէ կրոնական էկումենիզմի, սինթեզի կամ նույնիսկ զրույցի նոր թեմայի, այլ ունեին հստակ նպատակ՝ քարոզի և բերվող փաստարկների միջոցով մահմեդականացնել հպատակ քրիստոնյաներին:

Սեֆյան Իրանի քաղաքական էլիտան հետաքրքրված էր քրիստոնեությունը ճանաչելու խնդրով, որը հետապնդում էր մեկ նպատակ՝ հպատակների կրոնը ճանաչելով ստեղծել քարոզչական այն միջավայրը, որը կհաջողեր պարտադրել իսլամը: Նույն իշխող վերնախավը ոգևորված էր Իրան ժամանած եվրոպացի քարոզիչների հետաքրքրության շրջանակներին ծանոթանալու և քննարկումներ ունենալու գաղափարով: Իշխող վերնախավը և շահերը, մասնավորապես օրինակ շահ Աբբաս I-ը և իր մուսուլման հոգևոր խավը խրախուսում էին եվրոպացի միսիոներների հետ բանավիճային հանդիպումները՝ փիլիսոփայական և կրոնական հարցերի շուրջ, նաև՝ քրիստոնեամուսուլմանական կրոնական համեմա-

---

Տաթևացու «Գիրք Հարցմանց»-ի (XIV դար) «Ընդդէմ տաճկաց» գլուխը և այլն: Մանրամասն տե՛ս **Կիվէխրեան, Եպս. Բ.**, *Իսլամը հայ մատենագրության մէջ*, Վիեննա, 1930, *Գիրք Հարցմանց*, առաջաբանը ***Ս. Արեւշատյանի***, Երուսաղէմ, 1993:

տությունների համատեքստում: Միջկրոնական վիճաբանությունների և քննարկումների ալիքը ներառում էր նաև հասարակ ժողովրդին, որոնք հավատափոխության գործընթացի թիրախն էին: Պետք է նշել, որ շահ Աբբաս I-ի արքունիքի վարչական պաշտոնները զբաղեցնող հայ և վրացի ղուլամները,[20] և հարեմի քրիստոնյա կանայք[21] նույնպես նպաստում էին քրիստոնեության նկատմամբ հետաքրքրության աճին:

Միջկրոնական վիճաբանությունները, ինչպես ասվեց, տեղի էին ունենում շահերի ներկայությամբ[22] և մուսուլման բարձրաստիճան հոգևորականների մասնակցությամբ: Շիա հոգևորականությունը պալատական վերնախավի հովանավորությամբ կազմակերպում էր կրոնական վիճաբանություններ, ուր հրավիրվում էին հայ հոգևորականներն ապացուցելու իրենց ճշմարիտ լինելը, և դրանք հաճախ ավարտվում էին վարչական-դատական պրոցեսներով, բռնի հավատափոխությամբ[23]:

Միջկրոնական վիճաբանությունների ընթացքում կրոնական հարցերի շուրջ բանավեճը տեղի էր ունենում կենդանի, դեմ առ դեմ, երկկողմանի հանգիստ և հարգալից միջավայրում՝ նաև տարբեր կրոնական համայնքների ներկայացուցիչների մասնակցությամբ: XVII-XVIII դարերում ստեղծագործած բանաստեղծ, հրապարակախոս Ստեփանոս Դաշտենցը (որը զբաղվել է նաև վաճառականությամբ) գրի է առել թվով յոթ զրույց-բանավեճ (Մայր Յուցակ Ձեռագրաց Սրբոց Յակոբեանց, կազմեց Ն. Արքեպս. Պողարեան, Երուսաղեմ, 1991, Հմր 346, Յուցակ Ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի, հ. Բ., Երևան, 1970, Հմր 8111), որոնց մասնակիցները եղել են ինքը, իրանցի մահմեդական վաճառականներ, բանաստեղծներ, մահմեդականացած հայեր[24]: Ս. Դաշտենցի

---

[20] «Թագավորական ստուկներ», որոնք ընդգրկվեցին վարչական և ռազմական ոլորտներում ղզլբաշ և թուրմեն զինվորականների ազդեցությունը չեզոքացնելու համար:

[21] **R. Matthee**, "The Poloitics of Protection. Inerian Missionaries in Safavid Iran under Shāh 'Abbās I (1587-1629)", *Contacts and Controversies between Muslims, Jews and Christians in the Ottoman Empire and Pre-Modern Iran*, p. 267.

[22] Շահ Աբբաս I-ը դավանաբանական վիճաբանություններ է կազմակերպել Իրանում քարոզչական գործունեությամբ զբաղված բողոքականների և կարմելիտների միջև՝ նպատակ ունենալով նրանց փաստարկները լսելու միջոցով ավելին իմանալ քրիստոնեության մասին. դրա ժամանակ հնչեցված հարցերի մասին փաստեր պահպանվել են կարմելիտյան հայրերից մեկի թողած փաստաթղթերում, տե՛ս **R. Ja'fariyan**, "Adabiyāt-e ẓedd-e masīḥī dar doure-ye Safavī" // *Tarjome-ye anājīl-e arbe'e*, pp. 23–25:

[23] **Տ. Հակոբյան**, «Հայերի պայքարը կաթոլիկական միսիաների ասիմիլյատորական ձգտումների դեմ Իրանում (XVII-XVIII դարերում)», *Արևելագիտական ժողովածու*, Երևան, 1960, էջ 273:

[24] **Հր. Միրզոյան**, «Ստեփանոս Դաշտեցու «Զրույց-Բանավեճերի» պատմամշակութային արժեքը», *ԲԵՀ* № 3, 1995, էջ 106-119, **նույնի՝** «Ստեփանոս Դաշտեցու առաջին «զրույց-բանավեճը», *ԲԵՀ* № 3, 1997, էջ 89-100:

այս բանավիճային զրույցները վկայում են ժամանակին միջկրոնական վեճերի արդիականության մասին, որոնք դուրս էին եկել նաև հոգևորականների շրջանակից։

Միջկրոնական վիճաբանությունների ընթացքում հասարակ քրիստոնյան, չկարողանալով բացատրել կրոնական այս կամ այն հարցը՝ ընդունում էր իսլամական պնդումները։ Ստեղծված իրավիճակը պատճառ էր հանդիսանում քրիստոնեական գիտելիքի բարձրացման մեթոդներ մտածելու ուղղությամբ, որի շրջանակներում կրոնական գրականությունը, Ավետարանը թարգմանվում էր պարսկերեն՝ մասնավորապես, հայադավան պարսկախոս բնակչության համար։

Այս համատեքստում ենք դիտարկում նաև Գանձակյան հայատառ պարսկերեն ձեռագիր Ավետարանը, որը թարգմանվել և ընդօրինակվել էր պարսկերեն՝ պարսկախոս հայ քրիստոնյա բնակչության համար և ուղղված էր քրիստոնեական գիտելիքի շրջանառության միջոցով այդ գիտելիքի մակարդակի բարձրացմանը, որպեսզի հայադավան համայնքը միջկրոնական վեճերի և քարոզի ընթացքում կարողանար դիմակայել մահմեդական քարոզչությանը, պահպանել կրոնական ինքնությունը։

HASMIK KIRAKOSYAN

THE ARMENO-PERSIAN HANDWRITTEN GOSPEL FROM GANDZAK IN THE CONTEXT OF INTERRELIGIOUS POLEMIC TRANSLATIONS

Keywords: Islamization, propaganda, treatises against Christianity, Scriptures, religious identity.

In Safavid Iran one of the means of Islamization was propaganda which included anti-Christian literature and confessional debates. Polemic treatises against Christianity, commentaries on religious matters (also by apostates and converts to Islam) were written and translation projects in the genre of *dalāʿil al-nubuwwah* (proofs of prophecies) were carried out.

In response to the Islamic propaganda, the Armenian Church was sponsoring the creation of relevant literature and the translation of the Gospels, in order to promote the knowledge of the Christian doctrine and confront the Muslim preachers in Muslim-Christian debates. The Armeno-Persian handwritten Gospel (M 3044) was copied in 1780 for supporting the religious identity of the Armenian community in Safavid Iran and resisting the Islamic propaganda.

АСМИК КИРАКОСЯН

ГАНДЗАКСКОЕ АРМЕНОГРАФИЧЕСКОЕ РУКОПИСНОЕ ЕВАНГЕЛИЕ НА ПЕРСИДСКОМ В КОНТЕКСТЕ МЕЖРЕЛИГИОЗНЫХ ПОЛЕМИЧЕСКИХ ПЕРЕВОДОВ

Ключевые слова: Исламизация, пропаганда, антихристанские трактаты, священные писания, религиозная идентичность.

В Сефевидском Иране одним из инструментов исламизации была пропагандистская деятельность, в рамках которой создавалась антихристианская литература и проводились межрелигиозные диспуты с целью доказать превосходство ислама. Писались авторские трактаты, в которых опровергались богословские догматы христианства, либо создавались переводы священных книг в жанре дала‘ил ал-нубува (доказательства пророчеств), а также распространялись сочинения вероотступников. В условиях исламской пропаганды армянская церковь покровительствовала созданию соответствующей литературы, в том числе перевода Евангелия. Рукопись № 3044 Матенадарана (1780 г.), арменографический персидский перевод с армянского Четвероевангелия, написана, чтобы помочь армянам сохранить религиозную идентичность под игом Сефевидского Ирана и противостоять исламской пропаганде.